

83

२-९१

2011

2003

83 - 3
2 - 90

ԲԱՐՅԱԿԱՆ ՎԻՊ

ԱՂԻԱՏ ՄԱՆՈՒԿ

Գ Ո Ր Ծ Ա

Թարգմանողին

Գ. ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆՑ ԵՒ Գ. ԽԱՉԱՏՐԵԱՆՑ

Տ Փ Խ Ի Ս.

ՏՊԱՐԱՆ ՄՈՎՍ. ՎԱՐԴԱՆԵԱՆՑ ԵՒ ԸՆԿ.

1881

1844 351180207

111053 U 359-13

U 590 P

[Faint handwritten notes at the bottom of the page]

U r f e

1931

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐ
ՀՈՒՍՈՒՆ

Հ ՈՒՄՈՒՆ

225-

ԱՂՔԱՏ ՄԱՆՈՒԿ

313

228 9 A R E U.

A blue ink scribble on a wavy line. The scribble consists of a series of loops and curves, resembling a stylized 'W' or a calligraphic flourish. It is drawn on a horizontal line that has a wavy, undulating pattern. The ink is a vibrant blue color.

Թաքդման ու թիւն

Գ. ՏԻՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆՑ ԵՒ Գ. ԽԱԶԱՏՐԵԱՆՑ

4. SEP-16 1866
 19 page manuscript
 1866. 1866. 1866. 1866
 1866. 1866. 1866. 1866
 1866. 1866. 1866. 1866
 1866. 1866. 1866. 1866

1 2 4 6

S ϕ ኑ ኩ ሀ.

ՏՊԱՐԱՆ ՄԱՎՍ. ՎԱՐԴԱՆԵԱՆՅ ԵՒ ԸՆԻ.

1881

38004 uel

Дозволено Цензур. Тифлисъ. 17 Юля 1881 г

2164-60p

Тип. М. Вартанянъ и К^о, Тройц. пер. д. № 11

ԱՂՔԱՏ ՄԱՆՈՒԿ

Սաստիկ ձմեռն էր: Խեղճերի համար դժուար էր մութ և խոնավ բնակարաններում առանց կրակի մնալը ձմեռուայ այսպիսի խիստ ժամանակում, մանաւանդ վատ էր նոցա համար, որովհետեւ այն տարի Յունկարեան ցրտերը սկսուեցան նոյեմբերից:

1830 թ. Տ.... քաղաքում բնակվում էր մի խեղճ արհեստավոր, որը չունէր հարբատութիւն: Նա ունէր հինգ որդի, ամենամեծը (անդրանիկը) արդէն ինն տարեկան էր, իսկ ամենափոքրը (կրտսէրը) դեռ ևս լաց էր լինում օրօրոցում: Խեղճ երեխայոց վերայ խնամող չքար, հայրը մինչև անգամ նոցա վերայ չէր մտածում:

Երեխաների մայրը մեռաւ և փրկուեցաւ իւր ամուսնուց քաջած ցաւերից և հառաչանքներից: Նորա մահից յետոյ երեխայը

մնացին չափազանց թշուառ դրութեան մէջ։ Մայրը աշխատող կին էր, նա գործում էր գուլպաներ, ժանում էր բուրդ, թէև քիչ էր աշխատում, այնուամենայնիւ որդւոյը շաբաթը դռնէ երկու անգամ տաք կերակուր էր ուտեցնում և պատառած շորերը փոխում։ Այժմ բոլորովին փոխուեցաւ երեխաների վիճակը, կերակուր եփող չը կար և ոչ շորեր կարող և փոխող։ Հայրը առաւօտները խըմում էր մի քանի բաժակ օղի և մինչև երեկոյ անց էր կացնում զինէտանը (кабакъ), իսկ երեխաներին ամեն օր ուղարկում էր ողորմութիւն խնդրելու, որոնցից խիստ կերպով պահանջում էր ժողոված փողերը։

Հենրիկոսը և Ժաննան 8-ից մինչև 11 ժամը լինում էին ուսումնարանում, իսկ օրուայ միւս մնացած մասը ողորմութիւն էին խնդրում։ Նկիւան, երրորդ որդին, ուսումնարան չէր գնում, այլ առաւօտից մինչև երեկոյ թափառում էր փողոցից փողոց և դռնից դուռ ողորմութիւն խնդրելու։ Ամենափոքրը պառկած էր օրօրոցում կեղտաշորի վերայ, որին կերակրում էին ջրում թրջած հացով։ Ամբողջ օրը նորա մօտ մընում էր իւր 3 տարեկան քոյր Բօզան։ Նա պառկած էր լինում կեղտոտ յարդեայ ան-

կողնու վերայ։ Երեկոյեան միւսները ևս դաւիս էին տուն, իւրաքանչիւրը օրական ժողովածից ուտում էին մի մի կոտոր հաց, իսկ փոքրիկը կերակրում էին օրօրոցում ինչպէս թռչունին, կաթը՝ որ ամենաօգտակարն է մանկանց համար իւր մօր մահից յետոյ համը առած չէր։

Հայրը հարբած տուն դառնալով հաւաքում էր երեխանց հաւաքած փողերը, որի մի աննշան մասը տալիս էր նախաճաշիկի համար գնած հացին, հէնց այս էր անդութ հօր միակ հոգսը երեխաների վերայ, այս էլ անում էր այն պատճառաւ, որ երկու մեծ որդիքը գնում էին ուսումնարան 8-ից մինչև 11 ժամը միջոց չունէին ողորմութիւն հաւաքելու։ Մնացած փողը նա տալիս էր զինու և օղու վարձ։ Խեղճութիւնից հիւանդութիւնը անհեռանալի է։ Մեծ քոյրը բոլորովին զոսացած էր, նորա սիրտը այնպէս էր ցաւում, որ չէր կարողանում շունչ քաշել, բացի զորանից նա կաղ էր։ Ձմեռը նա չէր կարողանում վազել՝ ոտքերը սառում էին։ Նա ոչ գուլպաներ ունէր, ոչ կօշիկներ՝ այլ նորա ոտները փաթաթած էին կեղտաշորերով։

Ժաննան զգում էր իւր թուլութիւնը, բայց

նա չէր կարողանում իրան ուղղել, նա վառ էր սովորում և ողորմութիւն ժողովելու վերայ ուշք չէր դարձնում: Ուսումնարանում վարժապետը նորան յանդիմանում էր նորա անհասկացողութեան համար, իսկ հայրն էլ միւս կողմից տանն էր յանդիմանում քիչ ժողովելու համար: Ամբողջ օրը նորա համար շարունակ նահատակութիւն էր:

Ելեղայի—միւս քրոջ աչքերը այնպէս ցաւում էին, որ առանց կապելու չէր կարելի թողնել, նա կապածի առանցքներէց տեսնում էր այնքան, որ պատի չը դպչէ կամ ձիւռ տակ չընկնի:

Փոքրիկ Պետրոսի վերայ (այնպէս էին աւուանում ամենափոքրիկին) նայող չըկար քիչ էր քնացել որ մեռնէր: Նորա խնամատար Բօզան թէպէտ հիւանդ չէր, բայց կարիքը նորան էլ քաշեց դէպի հիւանդութիւն:

Միայն Հենրիկոսն էր, որ բոլորովին առողջ էր, աշխոյժ և կայտառ ուշք չը դարձնելով խեղճութեան վերայ: Նա սիրում էր սովորել, արդէն բաւականի զրում կարդում էր և հաշվում և բացի դորանից նա առաջինը տարանի վերայ էր նստած ուսումնարանում: Մտաւորապէս զարգացած երեխան կարող էր աշխատել փողեր, օգնելու իւր եղբօրը և քոյ-

րերին, առանց նայելու իւր հասակին, բայց նորան այս բանի համար դրդող չըկար և ոչ էլ իրան մոքումն էր ծագում, թէ նա կարող է խեղճութիւնը տանից դուրս հանել: Նա ամաչում էր ողորմութիւն խնդրելու, բայց նա չէր հասկանում թէ ինչն է պատճառը որ ամաչում էր, կարծես թէ նորա խիղճը նորան ասում էր. «Մեղք բան է ողորմութիւն խնդրելը երբ կայտառ ես և ունիս կարողութիւն աշխատելու»: Ամէն երեկոյ հայրը հարկադրում էր ժողոված փողերը տալ եթէ ծեծ չեն կամենում:

Մի օր Հենրիկոսը անցնելով մի տան խոհանոցի դռների մօտից հէնց այն ժամանակ երբ տանտիրիկնը վերցնում էր կրակի վրայից պղինձը լի եփած զետնախնձորներով (կարտովի): Տանտիրիկնը տեսնելով երեխային, ածեց նորա գլխարկի մէջ հինդ կամ վեց զետնախնձոր: Հենրիկոսը սեղմեց գլխարկը կրծքին և բռնեց վերելից, որ չը ստուչն և վազելով դնաց տուն:

Բօզան նստած էր անկողնում և դողդողում էր ցրտից նորա ձեռքերը տեղ տեղ ուռել էին տրաքտրքուել և աշխատում էր խեղճ աղջկը իւր ընդարմացեալ անդամները փաթաթել կեղտաշորի մէջ: Հենրիկոսը նո-

րա ձեռքումը դրեց մի քանի գետնախնձորներ և Բօղան զգալով տաքութիւն ուրախութիւնով աղաղակեց: Նա կամենում էր ուտել, բայց համբերեց, որ երկար ժամանակ բռնի ձեռքերում տաք տաք գետնախնձորները:

Հենրիկոսը մօտ վազեց փոքրիկ եղբօր անկողնուն և դժուար է պատմել թէ ինչպէս կեղտոտ դրութեան մէջն էր երեսան, անկարելի էր պատմել: Աեղտաշորը, որի վերայ պառկած էր երեսան, կարած էր մի հասարակ կտորից, որից բուրում էր շատ անպիտան և գարշելի հոտ: Երեսայի երեսը և գունաթափ ձեռքերը մարդու սարսափեցնում էր: Նրբ երեսան տեսաւ եղբօրը սկսեց նորա դեղնած շրթունքների վերայ ծիծաղ փայլել:

Հենրիկոսը շատ էր սիրում եղբօրը և սկսեց տաքացնել նորա ցրտից սառած ձեռքերը և ապա մանրելով և ճմրելով գետնախնձորը կերակրում էր եղբօրը: Երեսան կշտանալով գետնախնձորի փշրանքներից, թռչունի նման կրկին բերանը բաց էր անում:

«Հենրիկոս, աղանեսակ» ասում էր Բօղան նստած յարդի վերայ, «բեր ամէն օր մեզ համար եկած գետնախնձորներ»:

«Այո՛, եթէ կրտան կրբերեմ» պատասխա-

նեց երեսան, ինչ յաճախ տալիս են հաց կամ զրամ, բայց գիտես ինչկայ ես 6 դրօշ (шесть грошей) եմ հաւաքել կերթամ փողոցը և կառնեմ քեզ համար գետնախնձորներ... միայն ի՞նչպէ՞ս եփենք, միթէ հաշմանդամ (անդամից պակաս) Մարիամի մօտ տանեիք եփելուն, այո՛ նա շատ տաշեղ ունի ժողոված»:

Երեսան խնայեց վազեց փողոցը և գնեց 3 կոպէկի գետնախնձոր, բայց քիչ տուին, որովհետեւ այն տարին երաշուով իւն էր և ամենայն բան թանգ էր: Փաթաթելով գետնախնձորները վերարկուի փեշում, նա վազեց հարեանի տունը (Մարիամի): Մարիամը մի ցածր հասակի կին էր միշտ ման էր դալիս թիկնափայտով բազից բազ տաշիղներ հաւաքելու: Մարիամը համաձայնեցաւ եփելու գետնախնձորները և մինչև անգամ տուեց մի կճուճ, որի մէջ սէռք է եփել էր գետնախնձորները: Հենրիկոսը լուանալով գետնախնձորները, հարեանի անից ջուր բերեց և սկսեց եփել: Ի՞նչ ուրախութեան մէջ էր Հենրիկոսը՝ պատմել անկարելի էր, նա կանգնած վառարանի մօտ անհամբերութեամբ նայում էր կրակին, կճուճին և ջրին: Ջրի ուշ եփ դալու պատճառաւ չէր կամենում աչքերը ջրի վրայից հեռացնել և շուտ շուտ տաշիղը

կոխում էր ջրի մէջ և դնում շրթունքների վերայ իմանալու թէ արդեօք տաքացել է ջուրը:

Ջուրը երկար ժամանակ չէր եփ գալիս Հենրիկոսը լցնում էր տաշիղները կձուճի տակը մէկը միւսի յետևից և միայն ծեր կինը փնթփնթում էր ասելով թէ բոլոր տաշիղները սորա վերայ գնաց, որից յուսահատուած Հենրիկոսը ասաց կնոջը «տուէ՛ք ինձ գետնախնձորները», բայց ծեր կինը համոզեց, որ դեռ պակաս է եփ գալը՝ հարկաւոր է էլի տաշիղներ աւելացնել: Քիչ ժամանակից յետոյ ջրի երեսին երևեցան մանր մանր փանփուշտներ, որ նշանէին ջրի եփ գալուն:

«Մ'ռ է գալիս, եռ է գալիս». աղաղակեց Հենրիկոսը և կամենում էր կրակիցը վերցնել կձուճի, բայց ծեր կինը առաց, որ էլի մի փոքր սպասէ, որովհետև գետնախնձորները դեռ ևս եփած չեն: Նրեխան անհամբերութեամբ սպասում էր, մի քանի վայրկեանից յետոյ ծեր կինը վերցրեց տաշիղը և սկսեց խառնել գետնախնձորները: Նրանք փափկել էին և վերջնելով կձուճը կրակից՝ ջուրը դուրս թափեց: Նրեխան ուրախութիւնից իրան մոռացաւ, տեսնելով պատրաստի

գետնախնձորները: Նոցանից մի քանիօր արդէն տրաքորքուել էին և առաւել համեղ էին: Հենրիկոսը երեք հատ լաւերից վեր առաւ ծեր կնոջ համար. իսկ մնացածը փաթաթելով փեշում վազելով գնաց տուն:

Արդէն մութն էր երբ ծաննան և Նլիզան վերադարձան տուն: Նրբ Հենրիկոսն էլ ներս գնաց և տեսաւ, որ երեխաները չոր հացի կտորը են կռծում:

«Նթէ գիտենայիք թէ ես ինչ եմ բերել ձեզ համար...» Աղաղակեց Հենրիկոսը:

«Ի՞նչ կայ» հարցրին ծաննան և Նլիզան զմայլած, Բոզան այս բանը իմանալով աղաղակեց. «գետնախնձորներ է գնել Հենրիկոսը գետնախնձորները»: Հենրիկոսը գետնախնձորները չորս մասն արեց և բաժանեց երեխաներին: Մի հատ նա պահեց Պետրոսի օրօրոցում. մնացումն ասում էր. «Թէպէտ երեխան քնած է, բայց վաղը կզարթնի և կուտէ»: Բոլորը միասին գետնախնձորներով լիացան, որովհետև արդէն մի ամիս էր, որ երեխաները, տաք կերակուր չէին կերած:

Ուտելով գետնախնձորները, նրանք սկսեցին եղբոր ձեռքերը համբուրել, իսկ նա քաղաքավարութիւնից շփոթուած լաց եղաւ չէ կարողանալով արտասուքը բռնել և ինքն իրան

մտածում էր. «Այն եթէ ամէն օր լինէին
գետնախնձորներ, լաւ բան կը լինէր, բայց յու-
սալ այս բանի վերայ շատ անօգուտ է»:

Այն ժամանակ ներս մտաւ հայրը, երե-
խայոց ուրախութիւնն էլ կորաւ: Երեխա-
ները վազեցին դէպի անկիւնը և նստեցան
չոր յարդի վերայ: Հայրը խմած էր, և ոչ
մի քաղցր խօսք չասաց երեխաներին, իսկ
երեխաները շտապում էին, որ փողերը հօրը
տան: Հայրը ճրագը վառեց և ձեռքն առ-
նելով սկսեց ման դալ տան բոլոր անկիւն-
ները, և տեսնելով, որ երեխայք փախչում
են, դէպի անկիւնները, աղաղակեց: «Դուք,
ինչո՞ւ լեռնային մկների (сурки) պէս թաք-
նուել էք. շո՛ւտ շո՛ւտ փողերը»:

Առաջ մօտ դնաց Փաննան և փաթաթե-
լով փողը քսակի մէջ տուեց հօրը: Ելիզան
ևս նոյնն արեց, իսկ խեղճ Հենրիկոսը կպել
էր պատին: Անկարելի է նկարագրել այս
տխուր և վշտալի տեսարանը:

«Ե՛յ դու ծոյլ ի՞նչու առաջ չես գալի»
աղաղակեց նորա վերայ հայրը: «Ե՛հ ինչ
անեմ հայր, այսօր փող չկայ»: այս խօսքերը
ասաց չ'ասաց, հայրը վրայ բերեց: «Ի՞նչ,
փողեր չունեն, ի՞նչպէս համարձակուեցար

այդ խօսքը ինձ ասելու»: Եւ սկսեց խեղճին
ծեծել:

«Ես քեզ ցոյց կը տամ, անպիտան, ո՛ր տեղից
ես փող ճարեմ, որ կերակրեմ այս բոլո՛ւին».
Ասում էր նա մատնացոյց անելով երեխանե-
րին: «Երեխաները ուտել են կամենում, իսկ
դու ձեռքերդ վայր թողած կանգնած ես,
աշխատիր, գտիր դոցա համար հաց, ա՛ն-
պիտան»: Մենք կուշտ ենք հայր, Հենրիկոսին
մի ծեծիլ լացադին ձայնով աղաղակեցին
աղջկերքը:

«Կերա՞ք... հարցրեց անխիղճ հայրը դառ-
նալով դէպի իւր որդիքը, իսկ ո՛վ առանց
ինձ ձեզ կերակրեց»:

«Հենրիկոսը». ասացին նոքա ի միասին:

«Հենրիկոսը» զարմանալով հարցրեց հայրը,
«չը լինի թէ միս լինի առած»: «Ո՛չ հայր գետ-
նախնձոր, գետնախնձոր...»:

«Նա ձեզ գետնախնձորով կերակրեց, այ
քեզ օրինակ թէ ինչպէս են փողեր փչաց-
նում: Այ անպիտան, դու ե՛ս, որ գետնա-
խնձորի վերայ ես մտնում փողերը: Դու մօ-
ռացե՛լ ես, որ ես հրամայել եմ փողերը ինձ
տալ, որովհետեւ ես պէտք է նախաճաշիկի
համար հաց էի առել, միտքդ պահիր, այս
բոլորը, հաստադու՛ւս: Դու շատ ե՛ս ժողովիլ»:

«Բոլորը 6 դրօշ էր»։ ողբալով ասաց երեսնան։

«Սուտ ես ասում դու առաջ շատ էիր բերում»։

«Հայր, ես սուտ չեմ ասում, որ բոլորը 6 դրօշ եմ ժողովել։ Ես նորանով զեանախնձոր առայ և եփեցի ծեր Մարիամի մօտ, ես երբեք նորանից աւելի ժողողած չեմ»։

Հարբածը այս խօսքերից յետոյ շատ խրատներ տուաւ, բայց որովհետեւ անկարելի էր երեսնաներից փող ստանալ, նա թոյլ տուեց և ճրագը հանգցնելով պառկեց քնելու։

Երեսնայքն էլ ներս սողացին յարդեայ ներքանոցի մէջ (Тюфакъ), որը ծառայում էր նրանց թէ իբրեւ անկողին՝ թէ իբրեւ սաւան և թէ իբրեւ վերմակ։ Խղճուկները երկար ժամանակ չը կարողացան քնել, նոքա համբուրում էին իրանց եղբօր երեսն ու ձեռքերը և շնորհակալութիւն անելով մխիթարւում էին նորա ազատուելուն համար։ Առաւօտը հէնց ծէքը բացուեց թէ չէ՝ երեսնաները արթնացան։ Ոչինչ չը կար նախաճաշելու, հայրը ստանալով սովորականից քիչ փող վաղ առաւօտը անհոգս գնաց իրա գործին։

Հենրիկոսը տուեց Բօզային Պետրոսի համար պահած զեանախնձորը և սովորեցրեց թէ

ինչպէս ուտեցնէ, երբ նա արթնանայ։ Եղբայրը և քոյրը միմեանց համբուրելով բաժանուեցան եղբայրը գնաց ուսումնարան, Բօզան մնաց տանը, իսկ Նիկոլան էլ իւր եղբօրը և քրոջը յուղարկաւորելով ուսումնարան, գնաց ողորմութիւն խնդրելու։ Նա ծանր քայլերով ման էր զալիս անից տուն ամենեկին չմտածելով թէ լաւ լան չէ աղքատութիւնը, երբ կարող է աշխատել։ Նա գործից յետ էր մնացած, որովհետեւ ցաւոտ աչքերով, ինչ կարող էր անել։

Հենրիկոսը լինելով առողջ կայտառ և ուսումնասէր տղայ, նա ամէն բան իմանում էր, թէպէտ հեռու կերպով, բայց այնուամենայնիւ կարողանում էր անցկացնել բոլորը իրան կարգին։ Նա չէր սիրում, որ ողորմութիւն հաւաքելով ապրի, այլ կամենում էր մի որ և է գործի ձեռք տալ։ Երբ որ նա ներս էր նայում մի արհեստանոցի պատուհանից և տեսնում էր թէ ինչպէս են աշխատում արհեստաւորները, նա ևս կամենում էր նոցա հետ ի միասին աշխատել։ Նա իւր աչքը նորանցից չէր հեռացնում, նորան լաւ էր թվում տեսնել աշխատանաց ձեւը։ Ամէն անգամ նորա հետաքրքրութիւնը շարժում էին այն գրքերը, որոնք դարսած էին դրա-

վաճառանոցի պատժհաններում: Նա շատ էր աշխատում իմանալ թէ ինչ է գրուած այն գրքերի մէջ, բայց չէր կարողանում, միայն այնքան գիտէ, որ ոչ մի գիրք չը կայ, որ անպիտան լինի: Նա խիստ էր ցանկանում գտնել մի գիրք և կարգալ և յաճախ մտածում էր, որ ահա կը բաց անեն մի գիրք և կը տան նորան կարդալու: Նա ինչ գրած թերթ էր գտնում փողոցում, վերցնում, կարդում և ապա պահում էր: Նա ներքանոցի մէջ ունէր մի տեղ, որ տեղ պահում էր այն բոլոր թղթերը:

Նոյն օրը երբ Հենրիկոսը դուրս եկաւ ուսումնարանից և կամենում էր գնալ, բայց յանկարծ նորա առաջը կանգնեց մի կառք, որից ցած իջաւ մի տիկին և կանչեց երեսխային:

«Վսիւր, երեսխայ ահա քեզ փողեր, գնա՛ այն խանութը և ինձ համար մէկ զրովանքոյ սուրճ ա՛ռ: Ես վախենում եմ ուղարկելու կառավարին, որովհետեւ ձիաները կրփախչեն... սպասիր, սպասիր ես մոտացայ ասելու կառնես նմանապէս կէս գրովանքոյ չամիչ, սեն, որ փողերը չը կորցնես»:

Հենրիկոսը գնաց մերձակայ խանութը, ուր շատ մարդիկ կային, որի պատճառով քիչ ու-

շացաւ: Նորան տուին սուրճը, չամիչը և մնացած դրամները: Երբ Հենրիկոսը հասաւ տիկնոջ մօտ նա ասաց Հենրիկոսին. «Պու երկար ժամանակ ուշացար, այնուամենայնիւ այդ ինչ փող է»... «ՅՈ գրօջ»... «Վերցրու այդ քեզի համար իսկ գնածներդ դիր արկղում և իւրաքանչիւրը առանձին թղթումը վաթաթիւր... լա՛ւ, լա՛ւ ազատեա՛կ մնաս բարեաւ» և գնաց տիկինը: Հենրիկոսը վազտալով գնաց տուն բռնած ձեռքում ստացած դրամները, իսկ միւս ձեռքում կնքած թուղթը, որի մէջ փաթաթած էին առած իւերը: «Սորա վերայ մի բան կ'լինի գրուած», և ուրախութիւնից թուղթը անդադար շարժում էր: Հայրը արգէն տանն էր, երբ Հենրիկոսը տուն մտաւ և տուեց նորան իւր բոլոր ստացացած փողը և դրանով հայրը բաւականացաւ, հաշտուեցաւ որդու հետ և փաղաքեց նորան: (Նրա սովորական գգրուանքն այդ էր):

Մի քանի ընդհատ յետոյ նա պառկեց քնելու, իսկ Հենրիկոսը սկսեց այն թուղթը կարդալ: Ահա ինչ էր գրած այն թղթի վերայ: «Հենրիկոսը մի 6 տարեկան թոյլ երեսխայ էր, չը նայելով այս բանին նա իրան բարեութեց, երբ նրա հայրը մեռաւ, նա մնաց սի-

09-79112
5001

րել մօր, եղբօր և քոյրերի հետ: Նոքա կայք քիչ ունէին: Բարի և հաւատարիմ աղախներ օգնում էր մօրը երեխայոց դաստիարակելու համար: Հայրը մեռնելու կանչեց աղախներն և ասաց:

«Մայրիկ, 'ի սէր Գրիտոսի՝ իմ կնոջս չը թողնես, եթէ ես կը մեռնեմ, թէ նա և իմ երեխաներս կրննեն այլոց ձեռքը»: «Ես չեմ թողնի ձեր կնոջը, պարոն բժիշկ, եթէ դուք մեռնէք էլ, ես կմնամ նորա մօտ մինչեւ որ կարիքը ստիպէ հեռանալու»:

Այս խօստով հանգստացաւ հայրը և մեռաւ անհոգ, նորա մահից յետոյ աղախինը այս խօստովը կատարեց մինչև Հին րիկոսի մօր մահը: Այս քանը կարդալուց յետոյ կանգ առաւ: Այս պատմութիւնը, որ դրուած էր իւր անուանակից երեխայի վերայ նորան գրաւեց, մանաւանդ աղախինի բարութիւնը նորան լացեցրեց և սկսեց մտածել այսպէս. «Ես ևս կերթամ մէկին կը ծառայիմ հաւատարմութեամբ ինչպէս այն աղախինը»:

Նարունակեց կարդալը:

«Մայրը բարի կին էր, կատարում էր այն ամէն պարտականութիւնները, ինչ որ հարկաւոր էր երեխաներին դաստիարակելու համար:

Աղախինն էլ—անփոխարինելի օգնականը, երբ երեխաները կամենում էին վագել փողոցը՝ կամ մի որ և է տեղ ուր ի դուր էր գնալը միշտ արդելում էր ասելով. «Ինչու էք իզուր փչացնում ձեր ոտնամանները և մաշում շօրերը, դուք գիտէք, որ ձեր մայրը ամէն բանից ինքը զբաղում է, որ ձեզ կարողանայ դաստիարակել» և ամենայն զգուշութիւն զործ էր դնում որքան կարող էր:

Աղախինն միշտ աշխատում էր, որքան կարելի է արժան կերպով առնել բոլոր պիտոյքները և խնայողութեամբ էր մտնում փողերը:

Այս տողում քաջած էր մի քանի սև բծեր և մի քանի տող չէր կարելի կարդալ Հներիկոսը շատ աշխատեց կարդալու, բայց չը կարողացաւ: Նա կարդալը շարունակեց յաջորդ տողից:

«Բացի դորանից Հներիկոսը անհոգս էր անխոհեմ և անմաքրասէր էր, նրան միշտ պէտքէ յիշեցնէին կապելու կօշիկների երկը (կապը), փոխելու գուլպաները, քիթը սրբելու և այլն: Նա միշտ կոծում էր թաշկինակի ծայրը, որ կապած էր վզին: Այս երեխան անձնատուր եղաւ ցնորմանց, որ բնաւ յոյս չունէր աղախինը:

Այս երեսում այլևս չէր կարելի կարգալ, որովհետև դարձեալ բիծ էր երևում: Հենրիկոսը թուղթը շրջեց և շարունակեց կարդալը: «Նորա հօրեղբայրը բնակում էր առանձնացած, հանդարտ և խիստ կերպով պահպանում էր նախնեաց սովորութիւնները: Նա միշտ ասում էր ուսումնարանների վարժապետներին, որ նոքա ուսուցանեն երեսայոց թէ աղօթքներ և թէ Սրբազան պատմութիւն:»

Հենրիկոսը արդէն Ծ—ը տարեկան էր և ամառները գնում էր իւր հօր եղբօր մօտ քանի մի ամիս անցկացնելու համար այնտեղ, այս օրերը Հենրիկոսի համար մի մեծ ուրախութիւն էր համարվում: Ներեխան լինելով այս բարի և խելօք մարդու մօտ, մեծ ազդեցութիւն ունեցաւ նորանից, որը յաճախ ասում էր այս խօսքերը. «Նրեխաները պէտքէ ունենան ահ և երկիւղ Աստուծուց որովհետև նոքա պէտքէ այցելութիւն անեն Քրիստոնէից»: Այսքանից յետոյ դրած էր կարմիր տառերով և Հենրիկոսը կանգ առնելով ասաց հոգւոյ հանելով:

«Հենրիկոսի հօրեղբայրը բարի ծերունի է եղել, հէնց այս տեղից երևում է... բաղդաւոր էր նա, ո՞վ ունի այսպիսի հօրեղբայր...»

«Նրեխայը պէտք է ունենան ահ և երկիւղ Աստուծուց որովհետև նա պէտքէ այցելութիւն անի Քրիստոնէից»:

Այս խօսքերը խոշոր տառերով է գրուած Քրիստոնէական հաւատոյ հրահանգի մէջ ևս (КОТІХІЗІСЬ): Մեր հայրը ուղիղ Քրիստոնիայ է, կարելի է, որ այդ բանը լինի, որովհետև վարժապետը խօսելիս նորա վերայ կոչում է նորան «ծեր ուրբեցոյ»:

Յետոյ, մեր հայրը հոգս չէ տանում մեղ սովորեցնելու աղօթքներ և կամ մի պատմութիւն Քրիստոնէական հաւատոյ... ողորմելի հայր, բայց կարելի է, որ վերջապէս նա դառնայ ճիշտ Քրիստոնեայ: Այժմ սիրելի ընթերցողներ, կրէք այնպէս բաներ, որոնք ձեզ կըզարմացնեն: Դուք չէք իմանալ այսպիսի բազմ սիրելի թէ ասել: Նա իւր խելճութեան ժամանակ տանը շինեց մանկանց համար կրթարան, նա նոցա կերակրում էր հազցնում էր, սովորեցնում էր և կրթում էր: Նա միշտ կամենում էր նոցա խելճութեան մէջ ընկըմամբ դրութիւնը բարւոքել...»

Այսքանը կարդալով Հենրիկոսը տղաղակեց: «Ա՛խ ի՞նչ բաղդաւոր էր Հենրիկոսը»: Նորա քոյրերը, որոնք նստած էին մի անկիւնում

և սպասում էին թէ երբ կը գայ ողորմութիւն խնդրելու ժամանակը զարմացմամբ նայեցին նորա վերայ:

Հենրիկոսը նայեցաւ հօր անկողնու վերայ և տեսնելով, որ հայրը քնած էր, հանդարտեցաւ, մօտ գնաց քոյրերին և ասաց: «Ախ եթէ զխտենայիք թէ ես ինչ գիրք եմ կարդացել:

Նշէլ է մի տղայ, որի անունը եղել է նոյնը ինչ որ իմնէ — Հենրիկոս Պետտալոցցի:

Նորա հօրեղբայրը սովորեցնում էր նորան Աստուծոյ կամքը, նոյնպէս և աղախինը, թէ ինչպէս պէտք է խօսքին հաստատ մնայ: Նրբ նա մեծացաւ նա շատ խելո՞ւ գրութեան մէջ էր բայց այնուամենայնիւ այդ խելո՞ւ թիւնը նորան չէր խանգարում զբաղուել խելո՞ւին կերակրելով, հացիցնելով և ուսուցանելով: «Ախ երանի մեզ վերայ հօգար, ախոս որ այդ բարի պարոնը մեր քաղաքումը չէ» ասացին քոյրերը:

«Նա էլ այդ եմ տեսնում աւելացրեց Հենրիկոսը, եթէ նա այստեղ լինէր մենք կարիք չէինք ունենալ ողորմութիւն հաւաքելու, նա մեզ ամէն բան կտար, ինչ որ մենք կը կամենայինք, բայց լսեցէք քոյրեր ես կը կարդամ հետեւեալ կտորը: Նստեց նոցա հանդէպ, որ

պէս զի հօրը չը գար թեցնի յածր ձայնով սկսեց կարդալ:

«Պետտալոցցին մտածում էր, թէ կարելի է արդեօք կրթել երեխանց այնպէս, որ ծախսը քիչ լինի: Նոքա պէտքէ աշխատէին իւրեանց օրական հացը ձարելու: Նա իւր մրութումը որոշեց կրթութեան նախագիծը և որը հռչակեց: Կաւ եղանակին երեխայք պէտք է աշխատէին դաշտում, իսկ վատ եղանակին դործեն և մանեն և նորանով հաց ձարեն: Տղայք երկրագործութեամբ պէտքէ պարապէին, իսկ աղջիկները տան տիկնութեամբ և այգեստանութեամբ:

Այս Աստուածահաճոյ դործի համար ոչ թէ միայն իրան բարեկամները տուեցին իւրեանց լուման, այլ և հեռաւորները:

Գարոցի իրագործելու տարին — 1775 թուին — կային միայն 50 աշակերտ: Այդ աշակերտները յանձնուած էին 7 արհեստ ուսուցանող վարժապետներին, որոնք երեխայոց պէտքէ սովորացնէին մանել և դործել: Բացի դորանից կային էլ 4 ծառաններ, որոնք պէտքէ սովորացնէին երկրագործութիւն, այգեպահութիւն և ուսումնարանում պէտքէ ծառայէին: Բնքը Պետտալոցցին իւր կնոջ օգնութեամբ կրթում էր երեխայոց: Նա բոլորի հա-

մար հայր, վարժապետ և բարեկամ էր: Նա հոգում էր նոցա կերակրի, շորի և աշխատանաց վերայ: Նա պարապում էր քերականութեամբ, երգեցողութեամբ, կրօնադիտութեամբ, թուաբանութեամբ և մարմն ամարդութեամբ:

Այս էր Դպրոցի առաջական նախադիժը: Այս խօսքերով թերթերը վերջացաւ: «Աղօթեցէք և աշխատեցէք». ասաց Հենրիկոսը վերջացնելով ընթերցումը. «Սրբազան պատմութեան մէջն էլ ասվում է... Աստուած ասաց Ադամին. «Բոքրօնքով հաց կուտես»:

«Բայց մենք չենք աշխատում» ասաց Ժաննան: «Աղօթում ես դու առ Աստուած» հարցրեց Նելլան. «Նա կարդում եմ այս աղօթքը, որ սովորեցրեց ինձ մայրը, որը սկսվում է այսպէս. Տէր ողորմեա... շարունակութիւնը ես մոռացել եմ»:

«Նա երբեմն կարդում եմ «հայր մերը», բայց յաճախ ես աղօթել մոռանում եմ ասաց Հենրիկոսը:

«Հայր մերի մէջը» ասաց Ժաննան «ասած է մեր ամէն օրեայ հացը առաջ մեզ այսօր ևս... և այդ բանը մեզ սովորեցրել են ուսումնարանում, և կարդում եմ ամէն օր, որ Աստուած մեզ հաց տայ»:

«Նա կ'աղօթեմ, որ Աստուած ինձ տայ գեանախնձորներ». ասաց Բօզան: Այս խօսակցութեան ժամանակ երկուսի երէք քառորդը լրացաւ, հայրը արթնեցաւ, գլխարկը ծածկեց և դնաց աշխատելու:

«Միտքներդ բերէք» ասաց հայրը դուրս գնալով. «երեքդ էլ փող պէտք է բերէք, թէ չէ կը ծեծուէք»:

«Էլի ողորմութիւն խնդրի՞ւմ գնալ» ասաց Հենրիկոսը, երբ հայրը դուրս գնաց. «Իսկ ես կ'ործում եմ, որ այդ բանը մեղք է, բայց ճարահատուած հօրս կամքը պէտք է կուտարեմ»:

«Եթէ փող չը բերե՞ք անպատճառ կը ծեծուենք» ասաց Նելլան, «դնանք, այսօր աւելի տաք եղանակ է քան անցեալ օրերը»: Հենրիկոսը թուղթը պահեց ներքանոցի մէջ և տանից դուրս դալով համբուրեց փոքր եղբորը. «Ո՛հ ինչպէս դժգոյն և նիհար է» ասաց Հենրիկոսը «միայն ոսկորները և կաշին է մնացել»...:

Որպէս զի կարողանանք սրան դարձնել Պէտտալոցցու նման մարդ պէտք է աշխատե՞ք... կարծեմ ես մի թուղթ ունիմ, ուր գրուած է թէ ինչպէս պէտք է երեխաներին մեծացնել: Հա, մի անգամ ես գնացի հօրս համար ծխա-

խոտ առնելու, յետոյ ծխախոտը ածեցի արկղում, իսկ թուղթը ինձ համար պահեցի և կարդացի, պէտք է, որ ես իսկոյն որոնեմ: Գնացէք ողորմութիւն խնդրելու քոյրեր, իսկ ա՛յն երեկոյեան կը գտնենք եւ ես էլ կ'երթամ, միայն քիչ ուշ:

Քոյրերը շատ էին ցանկանում իմանալ թէ Հենրիկոսը ինչ կանի երեխայի հետ ու թագ կենալով ման էին գալիս անկիւններում, բայց տեսնելով հօր գաւազանը այնտեղ դրուած դուրս փախան փողոցը:

Հենրիկոսը վեր քաշից ներքնակը, շուռ ու մուռ տուեց իւր թղթերը և գտաւ թերթը, որի մէջ առաջ փաթաթած էր ծխախոտը և կարդաց հետեւեալը:

«Նրեխայոց հիւանդութիւնը առաջանում է օդի վատութիւնից և չը վիճակելուց: Նրեխայի սպիտակեղէնները պէտք է ամէն օր փոխել սենեակը պէտք է մի քանի անգամ հողմով մաքրել (протирать) և երեխային եթէ կարելի է մի քանի անգամ լաւ օդի մէջ գուրս բերել: Անկողինները հարմար պէտք է լինեն մաքրելու և ներքնակների փետուրները չը պէտք է կեղտոտ պահել, որովհետեւ զարշէլի հոտ են արձակում: Նրեխայոց համար ամենաօգտակար կերակուրը կաթն է

շաքարով, կարելի է նմանապէս տալ փափուկ կարկանդակ սպիտակ ալիւրից կամ շաքար»:

Թուղթը մեծ չէր, նորա կարդալու շատ ժամանակ չէր հարկաւոր և Հենրիկոսի կարգացածն էլ հէնց բաւական էր:

«Ամէնից առաջ, եղբայր» ասաց նա «ես քեզ կըլողացնեմ, նոր անկողին չինել քեզի դժուար է և քո ներքնակի փետուրները արդեօք թողոտ չե՞ն... այո... մի անգամ մեզ մօտ մոտաւ պարոն դերձակը և հէնց գուռը բաց արեց թէ չէ հոտից նեղացած զանդատուեցաւ...: Այս նորանիցն է, որ մենք երբէք պատուհանները չենք բաց անում, այժմ ես կը սկսեմ ամէն օր բաց անել»:

Հենրիկոսը վերցրեց օրօրոցից երեխային և տեսաւ, որ շապիկը շատ կեղտոտ է:

«Հա... Հա... թղթում ես կարդացի, որ պէտք է սպիտակեղէնները լուանալ բայց մենք ուրիշ շապիկ չունենք, որ մինչև լուանալը այն հաղցնեմ, այժմ ձիշտը չի կարելի իմանալ, զեռ տորա երեսը և ձեռքերը լուանամ: Նա մօտ գնաց կձուճին, որ դրած էր պատուհանում և արդէն մէջի ջուրը սառել էր: ձար չը կար պէտք է երեխային նորից օրօրոցը դնէր և յուսահատութիւնից ծոճրակը քորեց տակով:

«Ինչ մնում է, որ առանց լողացնելու թողնեմ անկողնում, սպասիր ես կը մտածեմ: Հիմիկուանից Հենրիկոսը կը վարուի ինչպէս Հենրիկոս Պետտալայցին, նա կը հողայ և կը կերակրէ քեզ առանց ողորմութիւն խնդրելու: Քիչ մտածելուց յետոյ Հենրիկոսը դուրս փախաւ փողոցը և գնաց այն տունը, որտեղ իրան միշտ ողորմութիւն էին տալիս: Բազի դրանը ոչ ոք չ'կար, բայց նա ներս գնաց լուացարանը և տեսաւ որ փռում են սպիտակեղէնները ցամաքելու համար, մի քանիսը լուանում էին մեծ մեծ տաշտերում: Հենրիկոսը դռնից ասաց. «Օրիորդներ, կը հրամայէ՞ք արդեօք ձեզի օգնելու, ես լու կաշխատեմ»:

«Եթէ ձեզ հաճելի է աշխատել» ասաց լուացողներից մէկը, «ուրեմն բեր մեզ համար երկու երեք վեդրօ ջուր և ածա պղնձի մէջ, մենք դրա համար քեզ սխեռով կը կերակրենք, որ մնացել է մեզ ճաշից»: Հենրիկոսը երկու վեդրօ ջուր լցրեց պղնձը: Այս բանը նա շուտ կատարեց և ուրախ էր, որ աշխատում էր: «Ահա երեսան ինչ շուտ է կատարում իւր գործը» ասաց լուացողներից մէկը, «գնա՛ շուտով կեր սխեռը քանի տաք է»: Սխեռը ածած էր մի խորը ամանի մէջ

և տեսնելով այն Հենրիկոսը սաստիկ ուրախացաւ: «Ախ օրիորդներ, ես կամենում եմ այս սխեռը պահել մինչև երեկոյ քոյրերիս համար, որովհետև այժմ տանը չեն», ասաց Հենրիկոսը: «Քո կամքդ է աղանձակ» ասաց լուացողը, «ուրեմն այստեղից ուշ գնաց մենք մինչև գիշերը լուանում ենք»: Հենրիկոսը շնորհակալութիւն արեց և շտապեց դուրս գնալու: «Ել ի՞նչ ես կամենում» հարցրեց բարի լուացողը:

«Ե տեսնումեմ, որ դուք լուածքի ջուրը դէն էք ածում, թողէք որ վերցնեմ»:

«Այդ կեղտոտ ջուրը» զարմանալով հարցրեց լուացողը:

«Այո հէնց այդ ջուրը» պատասխանեց Հենրիկոսը: «Դեռ ես այն մաքուր է և կարող եմ լուանալ իմ քոյրերի շորերը և սպիտակեղէնները»:

«Բայց ճրտեղ պէտք է լուանաս»:

«Այստեղ լուանալ չի կարելի, երբ երեկոյեան քոյրերս կըզան տուն և երբ հայրս կը քնի ես նոցա շորերը կ'ընկեմ այստեղ»: Լուացողները ծիծաղեցան, բայց այնու ամենայնիւ թոյլ տուին, իսկ Հենրիկոսը ուրախութեամբ դուրս եկաւ:

Սրբ նա փողոցով անցնում էր մոտերեց

հօր ձեռնափայտը, որով պիտի պատժուէր ողորմութիւն չըժողովելու համար, վազեց դէպի այն տունը, որի առաջով անցնո՞ւմ էր, գործ ճարելու համար: Բակումը տեսաւ ծխնելոյս մաքրողին և ինք իրան մտածեց. «միթէ ես էլ գնամ ծխնելոյս մաքրելու, ես առաւել կը կեղտոտուեմ քան թէ այժմ, իսկ ես կամենում եմ մաքուր լինել, որովհետեւ Պետաղոցցին յանդիմանում է կեղտոտներին»: Իսկ ծխնելոյս մաքրողը ածխայ փայտերը հաւաքում էր ներքնարանը, այն բոպէին դուրս եկաւ տանից ծառան և հարցրեց բաներին: «Վարող ես հաւաքել բոլոր փայտերը» — «միայն ես չեմ կարող» պատասխանեց բանուորը: «Նս ձեզ կը օգնեմ» ասաց Հներիկոսը: Ծառան թոյլ առեց Հներիկոսին, որ գործին ձեռք զարնի իսկ Հներիկոսը առանց դժուարանալու փայտի կտորները լցնում էր ներքնատուն:

Մինչև երեկոյ նա բաւականի գործ շինեց, յետոյ գնաց գրսից հաւաքեց բաւականի տաշեղ և կողովով բերեց խոհանոցը: Խոհարարուհին տուեց նորան կերակուր, իսկ ծառան ջն գրօշ: Հներիկոսը ուրախութիւնից թռչկոտում էր, որովհետեւ շատ էր աշխատել առաւօտից մինչև երեկոյ: Տիկինը նրան

տուել էր ջն գրօշ, աշխատանաց համար ծառան էլ ջն գրօշ: Տիկինի տուած փողը ընծայ կարելի է համարել, իսկ երեկոյեանը, որ տուել էր ծառան, իւր աշխատանաց վարձն էր:

Նա երբ տուն գնաց, դեռ բոյրերը տուն չէին եկել: Նա բաց արեց պատուհանը և գնաց մեծ դրան մօտ աւելը փնտռելու: Նոյն բոպէին անսառ, որ դերձակը աւել դէն ձգեց, գնաց: Վերցրեց աւելը և սկսեց տունը աւելել, իսկ երբ մութը կոխեց այլ ևս չը կարողացաւ գործը շարունակել:

«Ոհ ինչ մաքուր օդ է այժմ» ասաց նա պատուհանը փակելով, յետոյ մօտ գնաց եղբօրը, հանեց շապիկը և փաթաթելով հին տոպրակում, որ բնիած էր հօրմահաւ կալի վերայ, ինքն էլ հանելով շապիկը հագաւ իւր վերարկուն ուղղակի մարմնի վերայ: Երբ քոյրերն էլ եկան հանեց նրանց շապիկները և յաճնելով ժողոված փողերը պատուիրեց տալու հօրը, իսկ ինքը շապիկները տարաւ լուացարանը: Հներիկոսին թոյլ տուին որ սպիտակեղէնները ածի մոխրաջրի մէջ, որ եփուի, իսկ ինքը եթէ կարող է սխեռ տանի իւր քոյրերի համար: Բարի լուացարարը սխեռ տաքացնելով կրակի վերայ, փաթաթեց շորի

մէջ, տուեց նմանապէս դրգալ և երեխան
թռչկոտելով գնաց տուն:

Հայրը արդէն վերադարձել էր տուն և
հաւաքելով փողերը ըստ սովորութեան գնա-
ցիւ էր գինէտուն: Հենրիկոսը ցոյց տուեց
գոյորշի արձակող սիսեռը: Նրեխանց բազմը
բանեց, որովհետեւ հայրը մոռացել էր ճրա-
գը հանդցնելու: Սիսեռը ուտելուց յետոյ
երեխան (Հենրիկոսը) առնելով պղնձը և
զրդալը վազեց լուացարանը:

Այնտեղ նա սկսեց հմտութեամբ լուանալ
սպիտակեղէնները, լուացարանները ևս օգնե-
ցին նրան և վերջացնելով փոքր լուացարա-
նում չորանալու: Այնուհետեւ թոյլ տուին
Հենրիկոսին, որ ամէն շաբաթ գնայ և լուա-
նայ: Հենրիկոսը վերադարձաւ տուն և քնեց,
երազումը միշտ երևում էին մաքուր շապիկ-
ներ:

Սուսուսը նախ քան մէկի զարկելը վաղ
վեր կացաւ և գնաց լուացարանը: Առա-
ջարարներից մէկը օգնեց նորան սպի-
տակեղէնները ծակելու և հարգելու և ստա-
նալով մի կճուճ ջուր գնաց տուն: Արբ նա
հասաւ տուն քոյրերը դեռ քնած էին Հեն-
րիկոսը զարթեցրեց նոցա և ցոյց տուեց մաքուր
շապիկները և լուանալու ջուրը:

Նրեխաները տաք ջուր տեսնելով սկսեցին
տաք ջրով երեսները ու ձեռքերը լուանալ,
իսկ երբ շապիկները հագան, ուրախութիւնից
սկսեցին սենեակում պարել: Հենրիկոսը փոքր
եղբօրը հանելով պառկեցրեց տաք ջրի մէջ
և լողացրեց երեխային, այնպէս դուր եկաւ,
որ սկսեց ձեռքերը ու ոտքերը թափահարել:

«Ո՛հ եթէ ես կարողանայի ճարել ուրիշ
անկողին» ասաց Հենրիկոսը դնելով երեխային
նոր շապիկով օրօրցի մէջ: «Ես բոլորը կատա-
րած կը լինէի, ինչ որ գրած էր թղթում:
Ես հրտեղից կաթը ճարեմ», բայց ես յու-
սով եմ որ Աստուած ինձ կը տայ: Ուսում
նարան գնալու ժամանակն էր: Ժամանակ արդէն
գնացիւ էր, Հենրիկոսն էլ պատուհանը մի
քանի րոպէ բաց պահելով, փակեց և գնաց
ուսումնարան: Գասերից յետոյ նա շտապով
վերադարձաւ տուն, վերցրեց իւր եղբօրը փա-
թաթեց հին սոպրակում և դուրս բերեց
փողոց լաւ օդ ծծելու համար: Մէկ տխուր տե-
սորան էր ներկայանում տեսնելը, թէ ինչպէս
կալում էր երեխան եղբօր կրծքին, փաթաթ-
վում էր նորա վերայ այնպէս, որ միայն երեսն
էր երևում: Հենրիկոսը նորան ման էր ածում
այնպիսի փողոցներով, ուր որ քամի քիչ էր
փչում: Հենրիկոսը քաղաքիցը հեռացաւ և

մի այգեպանի բակը մտաւ, բակումը կարկուղիների համար ախոռ: Այգեպանուհին պատարաստում էր իւղ, կթում էր կաթը և ծախում էր: Նրբէնրիկոսը մօտեցաւ այն տեղ արդէն կէսօր էր: Հենրիկոսը երեխան ձեռքին ներս զնայ ախոռը, այգեպանուհին տուեց նրան հաց և հրամայեց սպասել մինչև կաթը կըթելը:

«Բայց, ես ողորմութիւն խնդրեալ չեկայ» ասաց երեխան:

«Ապա ինչու համար եկար» հարցրեց նա. «ես եկայ այստեղ իմանալու, զորժ չկայ արդեօք, այստեղ ես կամենում եմ աշխատել, որովհետև ասած է. «լաւ չէ ողորմութիւն խնդրելը քաջի կարող ես աշխատել»:

«Կամենում ես ամեն օր դալ ախոռի աղբը մաքրելու» հարցրեց նա, «որովհետև մաքրելով աղախնին ժամանակ կը տաս թել մանելու»:

«Հրաշալի խօսք», ասաց Հենրիկոսը:

«Իսկ ինչ պէտք է քեզ այդ բոլորի համար վճարել» հարցրեց նա:

«Ես ուրախ կըլինեմ եթէ ինձ դուք կաթը տաք» պատասխանեց Հենրիկոսը:

«Ես իմ եղբորս կըբերեմ ամէն օր ճաշի ժամանակ և թողէք, որ ինչքան կամենայ

այնքան խմի»: «Շատ լաւ աղաւնիակ», պատասխանեց այգեպանուհին «Շատ ձեռնառ պայմաններ են հէնց իսկոյն քո եղբօրդ համար կ'ածեմ կաթ ամանում»:

Հէնց կթելը վերջացրեց թէ չէ տուեց նորան կաթը ամանով լիքը մինչև բերան: Հենրիկոսը նստեց երեխայի հետ սեամի վերայ և սկսեց նորան կերակրել: Նիհար երեխան ազահութեամբ և առանց շունչ քաշելու խմեց օգտակար կաթը. երբ բոլորը խմեց, սկսեց լաց լինել, որովհետև նորան դուր եկաւ և սկսեց դարձեալ խնդրել:

Հէնց այս բոպէին անցնում էր մի պարոն, որ և հարցրեց, թէ ի՞նչու է երեխան լաց լինում: Հենրիկոսը ասաց, թէ նա խմել է ամբողջ աման կաթը...: «Աւելի հարկաւոր չէ» քողցրութեամբ ասաց անծանօթը, «որովհետև կըհիւանդանայ: Նրեխան շատ պէտք է մանգայ, սա բարակացաւ ունի և զարմանալի չէ, որ նա գարնանը կըմեռնի»:

«Կըմեռնի», աղաղակեց Հենրիկոսը. «իսկ ես մտածում եմ դորան օգնելու»: «Այդ բանի համար պէտք է, որ նա քնի կովերի ախոռում և այնտեղ պէտքէ լինի օր ու գիշեր և այդտեղի գոլորշին շատ կօղնի նորան»: Պարոնը (նա բժիշկ էր) հեռացաւ, որովհետև ժա-

մանակ չունէր: Ախոռում ապրելը ասաց չեն-
րիկոսը «չատ լաւ բան է գոնէ նա չի պառկի
կեղտոտ ներքնակի վերայ»:

Հենրիկոսը հառանչանքով նայեց այգեպա-
նուհու վերայ:

«Ռու այդ խղճուկին կամենում ես այստեղ
թողնել» ասաց նա քաղցրութեամբ «սպա-
սիր մենք դորա համար անկողին կպատրաս-
տենք»:

Նորա համար գտան մի մօուր, որի մէջ
հորդերին կերակուր էին տալիս, լցրին մէջը
խոտ, երեսային մէջը պառկեցրին և դրին
ախոռում միջնորմի յետև ուր որ առաջ հոր-
թեր էին պահում: Նրեխան պառկած էր մըս-
րում, կարծես առանձին սենեակում և եր-
կուղ չը կար կովերի եղջիւրներից: Հենրիկոսը
յափշտակուած էր ուրախութիւնից և չը
կարողացաւ արտասուքը բռնել: «Ո՛հ ինչպէս
կ'աշխատում ես» ասում էր նա, ամէն օր ժամը
5-ին ես կը գամ այստեղ, յետոյ թող նայեն
թէ ինչ մաքուր կլինի ախոռը: Վերջացնելուց
յետոյ մաքրելը, կ'երթամ ուսումնարան»:

Հենրիկոսը արտասուելով մի անգամ էլ
շնորհակալութիւն արեց այգեպանուհուն և
մնաս բարև տեսնելով եղբորը գնաց տուն:
Հայրը քնած էր: Հենրիկոսը ցածր ձայնով

բոլորը պատմեց քոյրերին պատահածները և
ինդրեց նրանցից յաճախ գնալ եղբօր մօտ
ողորմութիւն ժողովելուց յետոյ: Նրը հայրը
զարթնեց, Հենրիկոսը պատմեց նորան բոլորը
և հայրն էլ ուրախացաւ, որ գործը այսպի-
սի դիրք է բռնել: Ռուրս գնալով հայրը ա-
սաց, որ կերթայ այգեպանուհուն շնորհակա-
լութիւն անելու և վերցնելով գլխարկը դուրս
գնաց: Հենրիկոսը տխրում էր, որովհետև
զալիս էր ողորմութիւն ինդրելու ժամանակը:

«Ասի՛ր» ասաց նա ժաննային «մենք մօտ-
ծենք թէ ինչպէս անենք, որ ողորմութիւն չը
ժողովնք, պէտքէ գտնել այնպիսի գործ, որ
տայ նա այնքան փող, ինչքան մենք ենք ժո-
ղովում: Եթէ մենք ժողովում ենք 10-ը կամ
15 գրօշ օրական, հայրը դրանով բաւական
կը լինի, ես չեմ կամենում այլ ևս ողորմու-
թեամբ ապրել, որովհետև Պետտալոցին ասում
է. «աղօթեցէ՛ք և աշխատեցէ՛ք»: Հա. Հա.
Ժաննա ի՞նչիմ բեղ համար մոռծել, ծննդեան
տօները մօտենում են դու շինիր տիկիներ և
ծախիր կամ տօնավաճառում կամ տնից տուն
մանածայ:

«Բայց ես ոչ մի տեսակ կտոր չունեմ» աս-
աց ժաննան:

«Ես քեզ համար կըճարեմ», ասաց Հենրի-

կոսը «ես կ'երթամ հարեան դերձակի մօտ նա միշտ ունենում է շորի կտորներ, որ իւրեան պիտանի չէ և ես կարծում եմ, որ նա թէլ էլ և ասել էլ կրտայ»:

«Բայց ես մինչև տիկիններ շինելը հօրը ինչ տամ» ասաց Ժաննան:

«Մի և նոյն է ես կրգնամ ողորմութիւն խնդրելու» ասաց Նիկոլան, «որովհետեւ իմ աչքերս ցաւում է և չեմ էլ կարող տիկիններ շինել: Նրբ ես կ'ողորմեմ կէսը իմ ժողովածի կրտամ Ժաննային և երբ հայրը կըպահանջի, մենք նրան տանք առանձին առանձին»:

Հենրիկոսը գնաց դերձակի մօտ, որ կենում էր նոյն բակում և կարում էր փառաւոր շորեր գեղացիների և արհեստաւորների համար և նմանապէս կանանց շորեր: Հենրիկոսը նրան յաճախ ծառայում էր, տանում էր շորերը տիրոջ մօտ, ջուր էր բերում, հաց էր առնում: Նրբ դրանք մօտեցաւ աներկիւղ բաղնից դուռը: Մտածելով՝ երբ դու մէկին ծառայում ես նա ևս քեզ կըվարձատրի: Հենրիկոսը համարձակութամբ մտաւ դերձակի խանութը: Դերձակը նստած էր սեղանի մօտ և բոլորում էր կարմիր փապաւէնը բրդեայ կանաչ շորի բոլորը:

«Պարոն դերձակ», ասաց Հենրիկոսը, «ես ձեզանից մի բան պէտք է խնդրեմ, ես իմ

քոյր Ժաննայի համար կամենում եմ շինել տիկիններ, որ ծննդեան տօներին ծախենք. չէք ընծայի ինձ կտորներ, չէ որ դուք նրանցից շատ ունիք»:

«Ինչ որ կայ աճած այդտեղ բոլորը վերցրու քեզի համար» ասաց դերձակը, «դորանով ինձանից ոչինչ չի պակասիլ»:

«Շատ ուրախ եմ», պատասխանեց մանուկը, «միայն կամենում եմ էլի թել և մի քանի ասեր»:

«Այդ էլ կը ստանաս... քո քոյրը կարելի իմանում է, իհարկէ եթէ գիտենայ էլ հրաշք չէ, որովհետեւ նորա չափ օրիորդները կարում են լաւ, իսկ դուք բոլորդ էլ ծոյլերի նման փողոցից փողոց եք թափառում»: Հենրիկոսը բորբոքեցաւ, որովհետեւ դրա համար ամօթ էր, բայց նա իմանում էր, որ դերձակը ուղիղ էր ասում:

«Այո» ասաց, նա ցածր ձայնով «մենք մինչև հիմայ ծուլանում էինք, բայց այս օրից կը սկսենք մեր աշխատանքը ապրել»:

«Ուրեմն գնա՝ աղաւնետկ ուղարկիր ինձ մօտ Ժաննային ես նորան կտորներ էլ կը տամ կարելի էլ կը սովորեցնեմ»:

«Դու կամենում ես տիկին շինել, հողիս» քաղցրութեամբ հարցրեց դերձակը Ժաննային:

նային, երբ սեղանին մօտեցաւ «դրա համար դու պէտք է կարել զիտնաս... իսկ ասեղ բանացնել զիտն»։ «Ոչ պարոն» պատասխանեց ժաննան։

«Ուրեմն դու ի՞նչպէս պէտք է տիկին շինես»։

«Ձր գիտեմ, միայն թէ ես կամենում եմ աշխատել որովհետեւ ողորմութիւն խնդրել ամաչում եմ փողոցներում ցուրտ է, իսկ ես ծանր եմ մանգալիս»։ «Ինչպէս երևում է ձեր տանն էլ ցուրտ է»։

«Ոչ դրա համար մենք հոգս ենք քաշել ես կ'երթամ ամեն օրուա նման կաղ Մարիամի մօտ, նա ինձ կարել կը սովորեցնի իւր սենեակում»։ «Սիրելիս կարող ես ինձ մօտ էլ կարել եւ եթէ դու աշխատասիրութեամբ եւ լաւ կըլտես եւ կարող ես ինձ օգնել, ես քեզ կը ընդունեմ իմ աշակերտիս տեղը, որին ես ծուլութեան պատճառաւ դուրս արի։ Դու կարել շուտ կը սովորես, իսկ եթէ գործը լաւ կ'երթայ ես քեզ կը կերակրեմ էլ եւ շաբաթ սկան 50 դրօշ կը տամ։ Ահա ա՛ն ասեղը եւ թելը, կարիր այս մահուդը միւսի հետ։ Տես կը ցցես ասեղը մահուդի մէջ, յետոյ այսպէս, յետոյ այնպէս եւ այդպէս կը շարունակես։ Ուրեմն առ ասեղը այսպէս եւ մզրակները կարճ արա՛ եւ ասեղը

սեղը ուղեղ անցկացրու, եթէ ոչ կը շեղուես։ Ուրեմն շարունակիր մի շտապիր, այժմ նոյն յիր այդտեղ»։

Հենրիկոսի սիրտը լի էր ուրախութեամբ։ Նա ցած դալով սանդուխներից, գնաց իրան ծանօթ ճանապարհով։ Թէպէտ միւս նոյն փողոցներն էին եւ միւսնոյն տները, բայց նրա համար բոլորն էլ փոխուել էին եւ արեգակն էլ մայր մտել։ Հենրիկոսը ճանապարհին կամուրջից տեսաւ որ մեծ բազմութիւն էր բանում սառուցի վերայ։ Մի քանի քայլ անելուց յետոյ, գնաց գետի այն կողմը, ուր որ սառուցի կտորները բարձում էին սալակների վերայ։

Հենրիկոսը մօտ գնաց եւ ասաց թէ թո՛ղ կը տան, որ ինք էլ բանի։ Նորան ուրախութեամբ ընդունեցին իբրեւ մշակ եւ այնպէս արագ էր բանում, որ շարունակ ճակատից քրտինք էր թափվում։

«Այժմ ես հաց կուտեմ քրտինքովս» մտածում էր Հենրիկոսը «բայց ափսոս, որ հաց չը կայ» միտնեց, Հենրիկոսին տուին 10 ը դրօշ, նա թէպէտ պէտք է դրանով հաց առնէր, բայց միտը բերեց հօր ձեռնափայտը եւ վճռեց սպասելու, որովհետեւ յուսով էր, որ Նիկոլայի հաւաքած փողով կառնուի եւ ինքն էլ կուտի։ Ի հարկէ հացը ամէն մէկին քիչ կը հասնէր,

որովհետեւ ժաննան այսօր ողորմութեան չէր
գնացած, բայց այնուամենայնիւ նա ոչինչ
չառաւ: Նա ուղղակի տուն չը գնաց այլ գնաց
ախոռը եղբօրը տեսնելու: Երբ նա մտաւ
խոհանոցը, արդէն մութն էր: Խոհարարու-
հին ընթրիքի համար գետնախնձորներ էր
մաքրում:

«Եղբօրդ տեսնելուն ես եկելը ասաց նա
«նա այսօր ախոռ էր և ամբողջ օրը աչ-
քերը այս ու այն կողմն էր դարձնում, իսկ այժմ
քնած է: Երբ ես կերթամ զիշերով կովերին
կթելու, դարձեալ նրան մի աման կաթը կը
տամ: Օգնի՛ր գետնախնձորները մաքրելու յե-
տոյ ճրագը կը վառեմ և միասին գնանք ա-
խոռը»: Նա Հենրիկոսին դանակ տուեց: Նրա
տուած գետնախնձորները Հենրիկոսը շուտ
վերջացրեց: Շուտով նոքա վերջացրին բոլոր
գետնախնձորները և լցնելով կճուճը դրին
կրակի վերայ: Յետոյ աղախինը վառեց ճրա-
գը և երկուսով գնացին ախոռը: Երեխան տուա-
րակում փաթաթած քնած էր, նորա այտերը
վարդագոյն էին շրթուհները կարմիր և ձեռքե-
րը տաք, որովհետեւ ախոռում շոգ էր: Ո՛հ Հեն-
րիկոսը իրան ինչպէս բաղդաւոր էր համա-
րում, նա զգուշութեամբ համբուրեց եղբօրը

ճակատին, որ չը զարթնի և տապ ցած ձայ-
նով ասաց:

«Ինչպէս ես ուրախ եմ քեզ համար, ա-
ղաւեստի, քեզ յարմար է այդ տեղ, ինչպէս
դրախտում»:

Երբ Հենրիկոսը դարձաւ տուն հայրը ար-
դէն վերադարձել էր, Ելիզան բաժանեց ժո-
ղովածը ժաննայի հետ, այնպէս որ մէկին
ընկաւ 8 գրօշ, իսկ միւսին 9-ը և այդ փո-
ղերը իւրաքանչիւրը տուին հօրը:

Այդ ժամանակ բոլոր հացը կերած էր, ո-
րովհետեւ նոքա չմտածեցին, թէ Հենրիկոսը
բաղցած կը վերադառնայ: Խեղճ Հենրիկոս, նա
խիստ բաղցած էր, որովհետեւ ամբողջ օրը
աշխատել էր:

Բարկացաւ նա արդե՛օք այս բանի վերայ չա-
սաց արդե՛օք, «Եթէ գործը այնպէս կ'երթայ,
ես լաւ կը համարեմ ողորմութիւն խնդրել»:
Ոչ նա այսպէս չէր մտածում և դրա վերայ
ուշը էլ չը դարձրեց: Ծմարիտ է նա արտաս-
ուեց, երբ ժաննան ասած թէ բոլոր հացը
կերած է, բայց նա դարձաւ միւս կողմը որ
բոյրերը լացը չընկատեն և անկիւնում նստեց:

Երբոր հայրը գնաց, Հենրիկոսը հարցրեց
ժաննային, թէ այն օրը դերձակի մօտ ինչպէս
է անցկացրել և առանց պատասխանի սղա-

սելու, նա բըռնեց Ելիզայի և Ժաննայի ձեռքերը և զնաց դերձակի մօտ, Բօզան էլ հետեց նոցա:

Դերձակը նստած էր սեղանի մօտ և կարում էր: Նա գոհ լինելով Ժաննայից ասաց Հենրիկոսին. «Եթէ դործը այնպէս կերթայ նոր տարուց ես դրան իմ օգնական կրկարգեմ» այս ասելով նա ցոյց տուեց քոյրերերին Ժաննայի կարածը բարեկամաբար բարեւելուց յետոյ:

Դերձակի ծեր մայրը նստած վառարանի մօտ մանում էր և մօտը դրած փետուրներով լի կողովը:

«Լսեցէք ի՞նչ կայ որդի՛ք» ասաց նա երեխաներին, «փոխանակ տանը պարապ մնալու, եկէ՛ք ամէն երեկոյ փետուրներ ջոկելու, եթէ աշխատասէր կըլինէք, ես կըտամ իւրաքանչիւրիդ մի մի բլիթ կամ գետնախնձոր»:

Երեխայքն էլ այդ էին ուզում, նստել վառարանի մօտ և փետուրներ ջոկել: Այս բանը նոցա զմայլեցնում էր ևս առաւել, որ պէտք է բլիթներ ստանային: Դորանից յետոյ նոքա սկսեցին նայել Ժաննայի դործի վերայ, այսինքն կապտազոյն բրդեայ շորին, որի շուրջը բոլորած էր մատնաչափ լայնութեամբ կարմիր ժապաւէն: Աւարտելով քրոջ դործի տեսնելը նըս-

տեցան յատակի վերայ վառարանի մօտ: Մեր Մարթան տուեց նրանց փետուրներ՝ և գործը սկսուեցաւ: Իւրաքանչիւրը աշխատում էր իւր գործը վերջացնելու: Միայն դերձակի ասեղն էր փայլում և Մարթայի ջահրան պտտուելով ձայն էր հանում, իսկ երեխանց մատները անդադար աշխատում էին: Ջիմսցան թէ ժամանակը ինչպէս անցաւ մինչև Ծը ժամը, դերձակը պատրաստուեց քնելու և երեխայքն էլ ստացան բլիթները: Նոքա իսկոյն այնտեղ կերան, և չըմռացան Հենրիկոսի համար պահելու:

«Եթէ կամենումէք ամէն զիշեր եկէք փետուրներ ջոկելու, որ ես միշտ ստանում եմ հիւրանոցից այնտեղ սաղիր շատ են սպանում և ձեզ համար գործը անպակաս կըլինի»:

«Նս հէնց առաւօտուց կը դամ» ասաց Բօզան, որովհետեւ եղբայրներս դուրս են գնում Պետրոսն էլ տանը չէ և ես էլ միայնակ վախենում եմ»: Լաւ սիրելիս ասաց Մարթան. միայն հարկաւոր է աշխատել, ուղիղ նստել և յիմարութիւններ չանել, իսկ եթէ այդ բաները չես անի, ես քեզ տուն չեմ թողնի: Թէ որ ջանաւ էր կը լինես ես քեզ մեր ճաշին մասնակից կանեմ»:

Ահա այսպիսի բաղդաւորութիւն էր երե-

խաների համար, միայն Նիզան էր մանգալիս ողորմութեան համար և երեկոները գալիս էր Մարմայի մօտ, բայց Հենրիկոսը մտածեց.

«Թող այդպէս լինի մինչև ծննդեան տօները և յետոյ բոլորը կասեմ հօրս և Նիզան էլ ողորմութիւն խնդրելու չի գնայ»: Ամէն օր Հենրիկոսը 5 ժամին գնում էր ախոռը մաքրելու, որի վարձը ստանում էր եղբօր համար օրական երեք կճուճ կաթն:

Նա իւր գործը շուտ էր վերջացնում և վերադառնալով քոյրերին նա քնած է գլուխում և զարթեցնում էր:

Հենրիկոսը ամէն օր Մարթայից երկու կլոճուճ ջուր էր բերում, ամէնքը լուացվում էին և չունենալով սանր մատներով ուղղում էին մազերը: Յետոյ Ժաննան աւելում էր սենեակը և պատուհանը քիչ բաց անելուց յետոյ վախում էր: Ց-ը ժամին Հենրիկոսը և Ժաննան գնում էին ուսումնարան, Նիզան ողորմութիւն խնդրելու, իսկ Բօզան Մարթայի մօտ: Ժաննան աւելի լաւ էր համարում ճաշից յետոյ աշխատել, որովհետեւ աւելի աշխոյժ էր լինում և մինչև ծննդեան տօները պատրաստեց ծախելու 6 տիկին և մէկ միմոս, որոնք շատ լաւ էին շինած:

Հենրիկոսը ուսումից յետոյ գնում էր հիւրա-

նոցը, որտեղ դռնապանին օգնում էր մաքրել շորերը և կօշիկները և կառուարին (Kuyver) մաքրելու երիւարների լուծը և այլն:

Նրա ջանասիրութեամբ աշխատութիւնը ամէնքը գովում էին և վարձատրում և հայրն էլ բերածիցը գոհ էր:

Ծննդեան տօներից առաջ բոլոր տիկինները վաճառուեցան և մէկ մանէթից աւելի ստացան:

Ծննդեան տօներից 3 շաբաթ առաջ, երեսայք շատ էին աշխատում իսկ հայրը ուշք էլ չէր դարձնում:

Հէնց ծննդեան տօնի օրը, երբ հայրը անից դուրս էր գնում, ներս մտաւ դերձակը և սկսեց նորա հետ խօսել:

«Այսօր ծննդեան տօնն է և ամէն Քրիստոնէի համար այս օրը ուրախութիւն է: Այսպիսի օրերին հարկաւոր է բարի բան խորհելու, իրաւունք էք տալիս խորհելու»:

Հենրիկոսի հայրը նայեց դերձակի վերայ չրհասկանալով թէ ինչ է ասում: Նոքա շատ երկար ժամանակ մի բազումն էին կենում, բայց միմեանց հետ ծանօթածաց չէին:

Նրբ դերձակը կամենում էր խօսել, Հենրիկոսի հայրը խօսքը կտրեց, «Ձրգիտեմ թէ ինչի համար են այս բոլոր խօսակցութիւն-

ները: «Մի զարմանալ, բարե հարեան» պատասխանեց դերձակը, «Մենք ամենքս էլ մարդիկ ենք և սխալուել ամենքս էլ կարող ենք, մէկս այսօր, միւսը եղուց, իսկ դուք միշտ ծուռը ճանապարհներովն էք ման գալիս: Ենթադրեցէք թէ դուք շփուել էք ճանապարհից և մէկ մարդ պատահել է ձեզ և ցոյց է աւելի ուղիղ ճանապարհը... Արդեօք չէ՞ք լինի գոհ նորանից. և եթէ դուք նորան նոյնն էիք արել նա ձեզանից դո՛հ չէր լինի»:

Աւերմն սիրելիս դուք երեւակայեցէք, թէ ես մի մարդ եմ և պատահել եմ ձեզ շփուած ճանապարհի վերայ և ցոյց եմ տալիս ուղիղը կարծեմ կերթաք, իսկ եթէ չէք գնայ կը մոլորուէք:

Դուք վատնում էք գինեաներում այն փողերը, որ ձեր որդիքը ուղորմութեամբ են ժողովել և նոցա վերայ հոգում էք այնքան, որ նոքա սովամահ չը լինին, այդ էլ քո շահն է և ոչ թէ նորանցը...

Փոխանաի, որ դուք նոցա պարսպեցիէք աղնիւ գործով, դուք նոցա հրամայում էք աղքատութիւն անել և եթէ քիչ են ժողովում, դուք նորանց ծնծում էք...: Եթէ դուք հասկոցող լինէք կը խոստովանէք, որ ձեր արածը սղնվութիւն չէ... Դիտացէ՛ք,

որ մի ժամանակ այդ գործի համար պատասխանատու պիտի լինէք»:

«Իմ որդիքս դեռ ևս փոքր են, ինչպէս կարող են աշխատել» ասաց Հենրիկոսի հարը:

Այդ տեղ դերձակը համառօտ կերպով պատմեց Հենրիկոսի սրամտութիւնը և թէ Ժաննան ինչպէս է Հենրիկոսից աշխատել սովորել, դերձակը այս էլ հասկացրեց, թէ նոքա ինչպէս կարող են գանել իրանց օրական հացը աշխատութեամբ:

Հենրիկոսի հայրը այս բանի վերայ զայրանալով խօսեց, իսկ դերձակը նորա խօսքը կրտրեց և ասաց.

«Ան ևս ձեզ նման մարդ եմ կարող է վաղը կամ միւս օրը ինձ պատահի դուք էլ ինձ կը խրատէք, առ այժմ մնաք բարե»: Բարի գիտձեզ ճանապարհ դձեց Հենրիկոսի հօրը մինչև դուռը, իսկ Հենրիկոսի հայրը ոչ շնորհակալութիւն արաւ և ոչ էլ քննաւ բարե ասաց:

Այդ օրը Հենրիկոսը վաղ վերկացաւ գնաց այգեպանուհու ախոռը սրբեց և որովհետև այդ օրը տօն էր և ուսումնարան չպէտքէ դնար օգնեց աղանին անային գործերում: Աղանին նը նորան ընծայեց մի գ' ղեցիկ վերարկու և բաւականի փող: Հենրիկոսը հագնելով վերարկուն ասաց ուրախութեամբ.

«Նրբ ես վարժապետ կը լինեմ միշտ այսպէս կը հագնուեմ» և այգեպանուհուց շնորհակալ լինելով գնաց տուն: Տուն գնալիս նա գնաց վաճառանոց և գնեց գունաւոր պողպատ, որի մէջ դարսեց իւր փողերը, առաւ նա ևս գետնախնձոր աղու փախաւ տուն:

Նրբ վերադարձաւ տուն տեսաւ, որ հայրը եկել է և գինետուն այլևս չէ գնացել:

Նրբխայր ժողովուել էին անկիւններում և խօսում էին, Հենրիկոսն էլ մօտ գնաց:

Նրբխայր ամէնքն էլ սկսեցին իւրեանց նոր շորերով պարծենալ. Հենրիկոսը պարծենում էր իւր վերաբրիւով, Ժաննան իւր գոգնոցով և հին կօշիկներով, որ ընծայել էր Մարթան, Բօզան իւր հագուստով (кyптка), որի փեշերը մինչև նորա ծնկներն էին և թւերն էլ քսվում էին գետնին, և Նիզան պարծենում էր կաշեայ կօշիկներով և գլխարկով, որ ընծայել էր իւր աչքեր բժշկող բժիշկը:

Հայրը տեսնելով Հենրիկոսի առաձները զոջաց և գրկեց երեխաներին, շատ տարի էր որ երեխայք այդ պիսի գրկանք իւրանց հօրից չէին ստացել:



1846 թուականին Յունվարի 12-ին մի պիւղում երևում էր գեղեցիկ և հոյակապ

շինութիւն, որը շրջապատած էր պարտիզով: Շինութեան մի կողմում երևում էր մի սենեակ չորս պատուհաններով, որի մէջ գտանվում էին լայն և սև սեղաններ իւրեանց նստարաններով: պատի վերայ քաշ էր արած Նւրոպիոյ և Հայրենի երկրի քարտեզները, իսկ սեղանի վերայ դրած էր երկրագունդը, միւս պատի վերայ երևում էր Պաղեստինէի քարտեզը, որի տակ յատանի վերայ դրած էր սեղան և որի վերայ կային գրքեր, այն գրքերից մէկը գեղեցիկ կազմ ունէր վերան էլ դրօշմած էր հետեւեալը, «աղօթեցէք և աշխատեցէք»:

Շինութեան միւս կողմում երևում էր երկու սենեակ, որոյ մէջ դարսած էին տաներկու մահճակալներ, և որոնք ծածկուած էին սպիտակ և մաքուր վերմակներով: Այդ ննջարանն էր, իսկ միւս կողմում գտնվում էր առանձնասենեակը, որ աւելի փոքր էր: Ննջարանում ման էր գալիս մի երիտասարդ, որ հագնուած էր Նւրոպական ձեով. նորա աչքերը ուրախութիւնից փայլում էին և յաճախ նա ձեռքերը միաւորում էր միմեանց կարծես աղօթում էր: Նա նայում էր և գնում էր թէ ամէն բան կարգի է: Այդ ժամանակ ներս մտաւ մի հասակաւոր մարդ, նա նմանապէս հագել էր նոր շորեր, նորա վերայ նայողը

անպատճառ կասեր, որ նա մի քաղաքաւարի մարդ է, թէպէտ նա ապիտակահէր էր, բայց նորա վրայ ծերութեան նշան չբկար: Նա գննելով իւր շուրջը եղած առարկաները և տեսնելով, որ առաջուանից լաւ է ասաց.

«Հենրիկոս, ես սրանից 15 տարի առաջ այսպիսի օր տեսնելու յոյս չունէի»:

«Իսկ ես» ասաց Հենրիկոսը, «ընդ հակառակն էի մտածում և յոյս ունէի, որ կարժանանամ այսպիսի օր տեսնելու: Այն օրուանից, երբ ես կարգացի Պետաղոցցիութեայ, իսկոյն ինքս ինձ ասացի, թէ պէտք է լինիմ աղքատ երեխանց դաստիարակիչ, այսպիսի մի միտք արմատացաւ իմ հոգուս մէջ և ես այն օրուանից աշխատում էի, որ արժանանամ այդպիսի մի ժամանակի»:

«Փառք Աստուծոյ որդեակ այդ նպատակին էլ հասար» ասաց ոգևորուած հայրը «և ինչպէս ուրախ եմ, որ դու պատրաստես ընդունելու մի անմերձեանալի կոչումն, — դաստիարակիչ»:

«Հայրիկ» պատասխանեց Հենրիկոսը գրկելով ծերուկին. «ես չեմ վախենում Աստուծոյ — իմ յոյսս և ոյժս, առանց որոյ ես ոչինչ չեմ կարող անել և ոչինչ եմ, նա պարզեւ ելէ ինձ

ոյժ և շնորհք դաստիարակելու մանուկներին»:

Հենրիկոսը երբ խօսելը վերջացրեց ահա դռները բացուեցաւ և ներս մտաւ մի կայսար, որ դալիս էր մերձակայ գիւղից, ուր սովորել էր ատալեծագործութիւն: Այլ կասէր թէ դա այն Պետրոսն է, որ բարակացաւից փրկուեց ակոռի աղբի գոլորշիով, այդեպանուհու տուած կաթով և եղբօր հոգսերով:

Նկան նմանապէս Հենրիկոսի քոյրերը — Ժաննան, Նիլզան և Բօզան:

Ժաննան կոռութիւնից առողջացել էր, Նիլզայի աչքերը արդէն բժիշկն էր բժշկել և Բօզան էլ բոլորովին առողջացել էր:

Այսպէս ուրեմն սիրելի ընթերցող կարելի է խեղճութիւնը իւրեանից հեռացնել, հեռեւելով Հենրիկոսի օրինակին:

Հենրիկոսի հայրը դարձաւ կօշկակարութիւնից կառավարիչ կալուածների և կալուածատէրն էլ շինեց ուսումնարան, որի վերայ մէք խօսեցինք վերելք և դարձեալ կը խօսենք փոքր ժամանակից յետոյ:

Ժաննան, որովհետեւ ազատ ժամեր շատ ունէր, ապրում էր ձեռագործով:

Նիլզան պսակուեցաւ Զրադացական հետ: Բօզան էլ մի քանի ժամանակ կարգուե-

ցաւ խնամատար կալուածատիրոջ երեխաների վերայ:

Պետրոսն էլ ատախճագործ էր, իսկ Հենրիկոսըն էլ Ուսումնարանի տեսուչ և վարժապետ էր:

Յունվարի 13-ն էր ժամը 9-ը. ուսումնարանի զանգակը հնչեց և ուսումնարանի դուռը ժողովուրդեացան քահանայք, որոնց հետ կային 12 որբ և խեղճ մանուկներ:

Դոցա ևս ուղեկցել էին գիւղի բնակիչները Հենրիկոսը սկսեց նորանց խրատել այսպէս:

«Սիրելի երեխայք, երբ ես ձեզ նման երեխայ էի, չըզտեսնալով ինչ բանէ աշխատանքը դատարկաշրջիկ մանէի դալիս այս ու այն կողմը, բայց Աստուած ինձ օգնեց և ես հասկացայ թէ ինչքան մեղք բան է ապրել ողորմութիւն ժողովելով, երբ կարող եմ աշխատել զոնէ հաց: Երբ ես կարգացի Պետաւոյցցու կենսաբուժիչից մի բանի երես, ես նրկատեցի, որ նա համեմատ փրկչական խօսքերի երեխաներին իրանից չէր հեռացնում ուսուցանելով նորանց դարձրեց ուսեալ մարդիկ: Ես ևս կամենում եմ հետեւել նորան:

Մի կալուածատէր և բարի մարդ, լսելով իմ գործերս, ամէն ջանք գործ դրեց և միջոց տուեց սովորելու...

Տեսէք երեխայք, այս լաւ տունը, ուր մենք պէտք է բնակուենք և ուսում առնենք այս այն կալուածատիրոջ շինածն է: Նա ընտրեց ամենախելճերին ուսուցանելու այստեղ—որոնք ոչ հայր և ոչ էլ մայր ունին,— որբերին:

Այն որբերը հենց դուք էք, ուրեմն աշխատեցէք և աղօթեցէք համեմատ Պետաւոյցցու խօսքերին:

Մեր ուսումնարանը շինուած է մանկանց անմահ բարեկամ Պետաւոյցցու ուսումնարանի ձևով:

«Աղօթեցէք և աշխատեցէք» ասում էր նա, ուրեմն նորա խօսքերը և խրատները կատարենք:

Մենք սկսեցք այգին զարդարել շնորհակալ լինելով Աստուծուց:


Պետաւոյցցու հոգին մեր մէջ բնակուի, թէպէտ նա մեռած է, բայց ես գիտեմ թէ նա ինչպէս էր երեխայոց կրթում և ես ձեզ կը կրթեմ այնպէս:

Նորա ծննդեան օրից մինչև այսօր հարիւր տարի է, ուրեմն տօնենք նորա ծննդեան օրը և նորա անձոռնալի յիշատակը անուանելով այս ուսումնարանը. «Պետաւոյցցեական» ուրեմն «աղօթեցէք և աշխատեցէք»:

տեցէ՛ք» ինչպէս ասում էր երջանկայիշա-
տակը:

Ուսումնարանի դրան վերայ կպցւած էր
մի տախտակ, որի վերայ ոսկեզօծ տառերով
գրուած էր «1846 թ.»:





28

1499

2013

